

ԱՎԵՏԻՔ ԽՈՏԱՃԱՐԱԿԻ ԵՎ ՔԻԱՃԱԿԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ  
ՎԱՆՔԻ ԱԱՍԻՆ

ՏԱԹԵՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Ղրիմահայոց միջնադարյան հոգևոր օջախի՝ Քիմճակի (Քեմճակ, Քամճակ, Գամճակ) Ս. Աստվածածին վանքի մասին քիչ բան է հայտնի: Այս վանքի հետ է սերտորեն առնչվում XIV դ. Ղրիմահայ կրոնական նշանավոր գործիչ Ավետիք վարդապետ Խոտաճարակի անունը:

Ավետիք Խոտաճարակն ապրել է XIV դ. առաջին կեսին, եղել է Քիմճակի Ս. Աստվածածին վանքի առաջնորդը, ունեցել է աշակերտներ, սլավիրել ուշագրավ ձեռագրեր, ինչպես նաև հիմնադրել ու լրակառուցել է մի քանի հոգևոր շինություններ Ղրիմում<sup>1</sup>: Խոտաճարակի գործունեությունը մասնակիորեն անդրադարձել են Վ. Միքայելյանը և է. Կորիմազյանը<sup>2</sup>: Միջնադարյան գրիչները վարդապետին որակում են որպես «զարբասնեալ», «զհայրն աշխարհի», «աստուածարեալ», «տիեզերալոյս» և այլն<sup>3</sup>: Ավետիք Խոտաճարակի անվանը առաջին անգամ հանդիպում ենք գրիչ Գրիգորի թոգած հիշատակարանում. «Զսրբասնեալ վարդապետն զԱվետիք Խոտաճարակն, և հոգևոր երկամբք ծնեալ որդիքն իւր՝ Միխայ միայնակեացն, զՄարկոսն, զՎարդանն, զԹադոսն յիշեցէք ի Քրիստոս, որ վասն արքայութեանն յուսոյն եղեն կրանաւորք և ետուն զինչս իւրանց ի տէր վարդապետն. և նա Թորոս վարդապետին ձեռամբ ետ շինեալ զսուրբ Երրորդութիւնն յաստուածապահ քաղաքն Կաֆա, և եղ անդ ղտանական գիրքս յիշատակ իւրեանց և ամենայն աշխատաւորաց»<sup>4</sup>: Նույն հիշատակարանի վկայութեամբ Ավետիք վարդապետի համար, որը «յորդորեաց զբազումս ի բարեդործութիւն և զարդարեաց զեկեղեցի սուրբ շինեաց զեկեղեցի գմբեթ և յանուն սուրբ Աստուածածնին՝ ի Գամճակ վանքն և մի եկեղեցի՝ յաստուածապահ քաղաքն Կաֆա, և ետ գրել տանական երկու, զմինն ետ ի Քամճակն և զմիւսն՝ ի Կաֆային եկեղեցին՝ ի սուրբ Երրորդութիւնն և եղ արհնութիւն, զի խնամով պահեսցեն... Գրեցաւ գիրս ի Քրիստոսի մարդեղութենէն ՌԳՃԵ (1305): ԶԶԳ (1334) Հայոց թվին դրեալ

1 ԺԴ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Երևան, 1950, էջ 265-266, 348, 503: ԺԵ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. մաս Գ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Երևան, 1967, էջ 534:

2 Վ. Ա. Միքայելյան. Ղրիմի Հայկական գաղութի պատմություն. Երևան, 1964, էջ 63-64: Ն ու յ ն ի Ղրիմահայոց պատմություն. Երևան, 1989, էջ 16: Э. М. К о р х м а з я н. Армянская миниатюра Крыма. Ереван, 1978, с. 18.

3 ԺԴ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 253, 399, 503: ԺԵ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. մաս Ա, կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Երևան, 1955, էջ 207:

4 ԺԴ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 265:

է»<sup>5</sup>: Բերված հիշատակարանը ընդօրինակություն է արված 1334 թ.: Բնօրինակը պարունակող ձեռագիրը պահվում է Փարիզի Ազգային գրադարանում և վերաբերում է 1305 թվին<sup>6</sup>: Այսպիսով, Ավետիք Խոտաճարակը 1305 թ. կառուցել է արգեն գոյություն ունեցող Քիմճակի վանքի Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթը, գրանով իսկ զարդարելով «զեկեղեցի սուրբ», ինչպես նաև Կաֆայի (Թեոդոսիա) Ս. Երրորդություն եկեղեցին «Թորոս վարդապետին ձեռամբ»: Կառուցված և լրակառուցված եկեղեցիների համար Ավետիք վարդապետը մեկական ձեռագիր է պատվիրել: Կարծում ենք, 1332 թ. Գրիգոր Սուբխասանցի ձեռքով գրված Ավետարանի (Մատենագարան, ձեռ. № 7664) պատվիրատու ըստ Ավետիքը նույն ինքը Ավետիք Խոտաճարակն է: «Րարուն»՝ «ուսուցիչ» որոշիչը կցված է Խոտաճարակի անվանը նաև հուշակավոր դրիչ նտտերի գրած մի հիշատակարանում, որին կանդրազառնանք ստորև<sup>8</sup>:

Ավետիք վարդապետը զրադվել է նաև ուսուցչություն: «Հոգևոր երկունքից» ծնված Մարկոսը, Վարդանը, Թագետոսը և Միխայլը, անշուշտ, Խոտաճարակի աշակերտներն են եղել: Վերոհիշյալ Վարդանը 1372 թ. Երուսաղեմում գրված հետևյալ հիշատակարանի հեղինակն է. «Այլ ես երկրորդ անառակ որդիս՝ Վարդան արեղայս, որ տարագիր եղէ յիմ հայրենի գաւառէն, որ եմ ի Բարերթու, ի գեղջէ Երմնոյ որդի Կիրակոսի, տղայհասակ գնացի ի Ղրիմն, ի սուրբ վարդապետ Ավետիս Խոտաճարակն ի մաւտ, յետոյ աշակերտեցայ Պետրոս հայրապետին և պաշտեցի զշարական և զտետր ի վանքն, որ կոչի Ղըզըլտաչ, և եղա արեղա, և կեցա Ժ (10) տարի: Յետոյ շինեցաք վանք նոր, զոր Պետրոսի և Խոճայ Ազգի կոչի, յանուն երաշխաւոր սուրբ Աստուածածնին՝ խիստ վայելուչ և սիրուն ամենայն իրաւք»: Այնուհետև, արդեն ձերունագարդ Վարդանը նկարագրում է իր ուղևորությունը դեպի Երուսաղեմ և ծառայությունը տեղի Ս. Հակոբի վանքում<sup>9</sup>:

Ղզլտաչի վանքը գտնվել է այժմյան Շչերետովկա (նախկինում՝ Օթուկ) ավանի մերձակայքում, անտառի մեջ: Թե երբ են հայ կրոնավորները լքել այս կիսավիմափոր վանքը, հայտնի չէ: XIX դ. այն զբաղեցրել են ուղղափառ ուսանելը, վերականգնել խարխլված կառույցները, բարեկարգել շրջակայքը<sup>10</sup>: Վանքի մնացորդները մինչև օրս էլ գոյություն ունեն: Վ. Տուրի հավաստմամբ, միջնադարում Ղզլտաչի վանքը անտառային ճանապարհով, որի հետքերը այսօր էլ նկատելի են, կապված է եղել զրիմահայոց աթոռանիստ Ս. Խաչ վանքի հետ<sup>11</sup>:

5 Նույն տեղում, էջ 265-266:

6 Վ. Ա. Մ ի ք ա յ ե լ յ ա ն. Ղրիմի հայկական գաղութի պատմություն, էջ 63:

7 Ժ Դ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 253:

8 Նույն տեղում, էջ 348:

9 Նույն տեղում, էջ 503-504:

10 Путеводитель по Крыму Н. Головкинского. Симферополь, 1894, с. 439—440; Путеводитель по Крыму А. Безчинского. 1902, с. 414—415.

11 В. Т у р. Крымские православные монастыри XIX—начала XX века. Симферополь, 1998, с. 98.

Խոտաճարակի աշակերտները ուսանել են Քրիմի Ս. Աստվածածին վանքում, որն է: Կորիմագյանը տեղադրում է Կաֆայում<sup>12</sup>, իսկ Քր. Քուչներյանը՝ Հին Ղրիմի շրջակա անտառում<sup>13</sup>: Քրիմեական հայոց վանքի վերաբերյալ ուշադրով է հետևյալ հիշատակարանը. «...Բայց զրեցաւ սուրբ Սեւարանս ի մայրաքաղաքիս, որ կոչի Աուրխաթ, հռչակավոր վանքս, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, որ կոչի Քեմճակ, յառաջնորդութիւնն սուրբ հաւրն մերոյ խոռակարակ Աւետիս վարդապետին»<sup>14</sup>: Հիշատակարանի հեղինակը, որը Քրիմեական վանքի հոգեորականներից է կամ, նույնիսկ, Խոտաճարակի սաներից, վանքը տեղադրում է Սուրխաթում:

Միջնադարյան Սուրխաթը (օտար աղբյուրներում՝ Սուխաթ, Սուլկաթ, Սուլգաթ) կամ Ղրիմը (հետագայում՝ էսկի Ղրիմ, ներկայումս՝ Հին Ղրիմ) Ոսկե Հորդայի Ղրիմի ուլուսի կենտրոնն էր: Մի շարք ուսումնասիրողների կարծիքով, հայերը Սուրխաթի հնագույն բնակիչներից են եղել և հաստատվել են այստեղ դեռևս XI–XII դդ.<sup>15</sup>: Բնակավայրի «Սուրխաթ» անվանումը ես սրոշ մասնագետների կողմից կապվում է հայերի հետ և մեկնարանվում որպես զրա մերձակայքում գտնվող զրիմահայոց աթոռանիստ Ս. Խաչ վանքի անվան աղավաղված ձև<sup>16</sup>: XIII–XIV դդ., թերակղզու արևելյան կողմում՝ ծովային բեռնավտանակությունների կարևորագույն կենտրոններ Կաֆայի և Սուլգայայի (ներկայումս՝ Սուլգակ) միջև գտնվող, Սուրխաթ-Ղրիմը հանդիսանում էր քարավանային առևտրի նշանավոր հանդուցակներից մեկը Հյուսիս-սևծովյան տարածաշրջանում և միջնադարյան քաղաքի համար բավականին մեծ տարածք էր զբաղեցնում<sup>17</sup>: Այստեղ հայերն առանձին թաղամաս ունեին, որ կոչվում էր Վերին Հոդետներ, Վերնարնակ Հողահարկյա Թաղ կամ Ճղբնիս<sup>18</sup>: Հայոց թաղամասը, իր ավելի քան յոթ եկեղեցիներով հանդերձ, գտնվում էր քաղաքի թաթարական մասին կից<sup>19</sup>: Այն, որ Քրիմեական վանքը գտնվել է Սուրխաթում կամ, համեմայնդեպս, դրան շատ մոտ, կողմնակիորեն հաստատում է գրիչ Նատերի հետևյալ հիշատակարանը: Ներկայացնելով 1346 թ. Սուրխաթում գրված իր Ավետարանը, Նատերը շարունակում է. «Յայսմ ամի (1346 թ. – Տ.Ս.) շինեցաւ սուրբ Աստուածածինն մերձ ի վանքն սուրբ Աւքսենտի, ձե-

12 Э. Корхмазян. *Учл. աշխ.*, էջ 18:

13 Հ. Ք. Վրդ. Կոչներյան. Պատմութիւն գաղթականութեան իրիմու հայոց. Վենետիկ, 1895, էջ 2:

14 Ժեղարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. մաս Գ, էջ 534:

15 Ю. Кулаковски. Прошлое Тавриды. Киев, 1914, с. 67; А. Л. Бертъе - Делгагад. Исследования некоторых недоуменных вопросов средневековья в Тавриде. — Известия Таврической ученой архивной комиссии (далее — ИТУАК), N57, Симферополь, 1920, с. 104.

16 В. Д. Смирнов. Археологическая экскурсия в Крым летом 1886 года. — Записки восточного отдела Императорского русского археологического общества. Т. I, вып. IV, с. 287.

17 А. Л. Бертъе - Делгагад. *Учл. աշխ.*, էջ 101:

18 Ժեղարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 358, 370: Վ. Միքալյան. Ղրիմի Հայկական գաղութի պատմութիւն, էջ 104: Նոյն ղրիմահայոց պատմութիւն, էջ 38:

19 Տ. Սարգսյան. Միջնադարյան Սուրխաթի Հայերը և նրանց հավատադիները. — «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 2000, N1, էջ 110–114:

ոսանք Ավետիս Խոտաճարակ ընդունոյ և Աբրահամ իրիցու, որ երկուց ըստ  
րեաց եղև գործակից՝ սուրբ աւետարանիս և սուրբ տաճարին, որ յանուն  
սուրբ յաստուածամօրն շինեցաւ, և յայսմ աւուր վիրաւորեալ Խոտաճա-  
րակն Աւետիս զնաց աստի»<sup>20</sup>:

Այսպիսով, Քիմճակի վանքը գտնվել է Սուրխաթում, կամ դրա մո-  
տակայքում: Ավելի հավանական է վերջին տարբերակը, քանի որ եղած  
հիշատակարաններից միայն մեկն է բացահայտորեն մատնանշում Սուր-  
խաթ քաղաքում վանքի գտնվելու հանգամանքը: Մյուսներում այն պար-  
զապես հիշատակվում է որպես Քիմճակի Ս. Աստվածածին:

XIV-XV դդ. ղրիմահայոց աղբյուրները Ս. Աստվածածին անունով  
երեք հայկական հուշարձան են կապում Սուրխաթի հետ: Առաջինը քաղա-  
քի հայոց թաղամասի՝ Վերին հողետների տարածքում գտնվող եկեղեցին  
է<sup>21</sup>, երկրորդը՝ Քիմճակի եկեղեցին և երրորդը՝ Հայր Հովհաննեսի մենաս-  
տանի եկեղեցին «մաւտ առ մայրաքաղաքն Սուլիզաթ կոչեցեալ»<sup>22</sup>: XIX դ.  
աղբյուրները, Հին Ղրիմի հետ Ս. Աստվածածին անունով արդեն երկու  
հուշարձան են կապում: Առաջինը, այն ժամանակ դործող, քաղաքի մեջ  
գտնվող եկեղեցին է<sup>23</sup>, որ նույնն է, ինչ Վերին հողետների տարածքում  
գտնվողը<sup>24</sup>, իսկ երկրորդը՝ քաղաքի ծայրին, դեպի Թեոդոսիա տանող ճա-  
նապարհին կից, կամրջի մոտի Աստվածածին Չարխափանի եկեղեցին<sup>25</sup>:

Դիտարկենք Քիմճակի Ս. Աստվածածին և Չարխափան Աստվածա-  
ծին եկեղեցիները: Պետք է նշել, որ ղրիմահայոց ձեռագրերը միակ աղբ-  
յուրներն են, որտեղ պահպանվել է «Քիմճակ» տեղանունը: 1352 թ. Քիմ-  
ճակի վանքում գրված մի հիշատակարանի լուսանցքում, թուրքական տի-  
րապետութան շրջանում, այլ ձեռագրով արվել է հետևյալ լրացումը.  
«Քիմճակ, որ այժմ թուրքաց լեզուաւ Թեքէ ասի, զոր յառաջ դիւղ էր ե-  
ղեալ Քիմճակ անուն, և սուրբ Աստուածածնա [վանք] մի մօտ ի  
գեղն...»<sup>26</sup>: Ուրեմն, Քիմճակը եղել է հենց Սուրխաթ-Ղրիմի մերձակայ-  
քում գտնվող դյուղը: Այն իր անունը ստացել է կռիմչակների կամ որ ավե-  
լի հավանական է, կիպչակների (ղփչաղներ) այստեղ բնակվելու պատճա-  
ռով: XIV դ. Սուրխաթ-Ղրիմում ապրող ղփչաղների մասին հիշատակում է  
արաբ հեղինակ Իբն Ժոգահին, նշելով, որ սրանք քրիստոնյաներ էին<sup>27</sup>: Ի-  
պատեյան տարեգրությունը ևս անդրադառնում է Տավրիկայի ղփչաղնե-  
րին, 1224 թ. տեղեկությունների շարքում հաղորդելով, որ ոչ միայն Սու-  
ղակը, այլև թերակղզու մի շարք այլ քաղաքներ պատկանում էին ղփչաղ-  
ներին: Հիշատակվում է նաև այն ժամանակվա ղփչաղ խան Յուրի Կոնչա-

20 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 348

21 Նույն տեղում, էջ 518, 496-497, 427, 419 և այլն:

22 Նույն տեղում, էջ 586:

23 Մ. Բ ժ շ կ յ ա ն. Ճանապարհորդությունն ի Լեհաստան և յայլ կողմանս բնա-  
կեալս ի հայկազանց..., Վենետիկ, 1830, էջ 322: Հ. Տ ե ռ - Ա բ ռ ա հ ա մ յ ա ն. Պատ-  
մությունն Նրիմու. մաս 2. Թեոդոսիա, 1865, էջ 158:

24 Տ. Ս ա ռ դ ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 111-115:

25 Մ. Բ ժ շ կ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 323: Հ. Տ ե ռ - Ա բ ռ ա հ ա մ յ ա ն. Նշվ.  
աշխ., էջ 159:

26 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 400:

27 В. Т и з е н г а у з е н. Сборник материалов, относящихся к истории  
Золотой Орды. Т. I. Извлечения из арабских источников. СПб., 1884, с. 279.

կովիչի անունը, որը Ա. Ճակուբովսկու կարծիքով, դիսալոր խանն է եղել<sup>28</sup>:

Թաթարական տիրապետության շրջանում իրադրություններ, բնականաբար, փոխվում է, սակայն զփչաղներով բնակեցված վայրերը անմիջապես չեն դառարկվում: Դրանք շարունակում են դոյառեել փոքրիկ գյուղերի և ավանների ձևով, մինչև այս ժողովրդի հիմնական զանգվածի տարրալուծումը: Հայտնի է, որ արդեն XIII դ. կեսերին Սուրխաթ-Ղրիմը իրենից մի քանի մասերից բաղկացած, այսպես ասած, քաղաք-աղյուծերացիա է ներկայացրել, որտեղ յուրաքանչյուր էթնիկ խումբ զբաղեցրել է իր տոհմին թողամասը կամ շրջանը<sup>29</sup>: Մի երևույթ, որն ընդհանրապես բնորոշ էր խայտաբղետ բնակչության ունեցող միջնադարյան բնակավայրերին: Ամենայն հավանականությամբ, Քիմճակը հենց զփչաղների կամ կիպչակների զբաղեցրած հատվածն է եղել: Ինչ վերաբերում է կոիմչակներին, ապա Սուրխաթ-Ղրիմում սրանց բնակության վերաբերյալ որևէ կոնկրետ տեղեկություն չկա, բայց հայտնի է, որ օրթոդոքսալ հուդայականությունը դավանող այս ժողովուրդը Ղրիմ թերակղզու արևելյան կողմերում է կենտրոնացել դեռևս X–XVI դ.դ.<sup>30</sup>:



Նկ. 1

Քաղաքի հյուսիս-արևելյան ծայրամասում, դեպի Թեոդոսիա տանող ճանապարհին, մինչ օրս էլ պահպանվում է «Քեմալ Աթա» կոչվող

28 Ипатьевская летопись, 1871, с. 495; А. Ю. Якубовский. Рассказ Ибн-аль-Биби о походе малоазийских турок на Судак, половцев и русских в начале XIII в. — Византийский временник. Т. 25, Л., 1928, с. 62-63.

29 Տե՛ս Մ. Գ. Կրամարովսկի. Солхат-Крым. К вопросу о населении и топографии города в XII—XIII вв. — Итоги работ археологической экспедиции Государственного Эрмитажа, Л., 1989, с. 145—148; О. Домбровский, В. Сидоренко. Солхат и Сурб-Хач. Симферополь, 1978, с. 41.

30 К. Коюнашвили. Краткий словарь истории Крыма. Симферополь, 1995, с. 157—158.

մահամեղական ավերված սրբատեղին (նկ. 1), որը Վ. Ամիրնովի վկայութ-  
յամբ, անվանումը ստացել է Ղրիմի խանության օրոք այս մենաստանում  
գործող դերվիշների շեյխ Քեմալ Աթայի պատվին և իրենից ներկայացնում  
է դերվիշական թեքիեի շենքի ավերակ, շեյխերի անունները կրող տապա-  
նաքարերով հանդերձ<sup>31</sup>: Հնագետ Մ. Կրամարովսկին ևս ընդունում է այս-  
տեղ դերվիշների մենաստանի գոյությունը փաստը<sup>32</sup>: Ժամանակին Քեմալ  
Աթայի մերձակայքում է եղել Թամղաշի գյուղը, որն իր անունը ստացել է  
չնորհիվ այն բանի, որ այստեղ ստուգվել և թաթարական թամղան կրող  
դրոշմով կնքվել են Սուրխաթ-Ղրիմ մտնող բոլոր ապրանքները<sup>33</sup>: Հասկա-  
նալի է, որ գյուղի Թամղաշի անունը ծագել է Ոսկե Հորգայի տիրապե-  
տության շրջանում, երբ Սուրխաթ-Ղրիմը քարավանային առևտրի խոշոր  
հանգույց է եղել: Հնարավոր է, որ այս գյուղը դբաղեցրել է նախկին Քիմ-  
ճակի տեղը, որը հայերը, լինելով տեղանքի հին բնակիչներ, շարունակել  
են նախկին անունով կոչել: Իսկ այն, որ Քիմճակը մինչթաթարական ծա-  
ղում է ունեցել, կասկածի տեղիք չի տալիս: Այստեղ հարկ է հիշել Բեր-  
տիե-Դելագարդի այն եղրակացությունը, որ ի տարբերություն ջենովացի-  
ների, որոնք պահպանել են Ղրիմի բնակավայրերի հունական անվանում-  
ները, թաթարները դրանց կամ նոր անուններ են տվել, կամ էլ գրանց  
հնչողությունը հարմարեցրել են բառեր կամ արտահայտություններ իրենց  
լեզվից, փոխելով տեղանվան իմաստը<sup>34</sup>: Իհարկե, հնարավոր է նաև, որ  
Քիմճակը և Թամղաշին քաղաքի հյուսիս-արևելքում գտնվող իրարից  
տարբեր բնակավայրեր են եղել: Կարևորն այն է, որ այս տեղանվան առ-  
կայությունը, բացառապես հայկական աղբյուրներում, վկայությունն է  
այն բանի, որ հայերն այս տարածքում մինչթաթարական շրջանի բնակիչ-  
ներ են եղել: Քեմալ Աթայի այսինքն թեքիեի մերձակայքում, Սուրխաթ-  
Ղրիմի պարսպապատերից ներս, սակայն քաղաքային թաղամասերից զգա-  
լիորեն հեռու, մի ժամանակ կանդնած է եղել հայոց Ս. Աստվածածին  
վանքը, որն էլ հենց XIX դ. աղբյուրներում հիշատակվում է որպես Աստ-  
վածածին Չարխափան եկեղեցի: Կարծում ենք, որ ավելի հավանական է  
հայոց եկեղեցու հիմնադրումը տեղի քրիստոնյա ղփչաղների գյուղի տա-  
րածքում, քան կոիմչակների հոգաբարձի սրբատեղիի մերձակայքում,  
որն, անկասկած, գյուղը վերջիններիս պատկանելու դեպքում սլիտի դո-  
յություն ունենար: Ահա մի փաստարկ ևս հօդուտ այն բանի, որ Քիմճակ  
տեղանունը կապված է հենց ղփչաղների հետ:

Այժմ տեսնենք, թե ինչքանով է հավաստի Քր. Քուչներյանի այն  
տեղեկությունը, թե Քիմճակը գտնվելիս է եղել Հին Ղրիմի շրջակա ան-  
տառում: Քիմճակի Ա. Աստվածածին եկեղեցու մասին վերջին հիշատա-  
կությունը հանդիպում ենք 1482 թ. մի Ճաշոցում: Ձեռագիրը պատվիրել է  
ոմն Աթապեկ, Ինտիրճե Քիմճակի Ս. Աստվածածնին նվիրելու նպատա-  
կով, բայց մինչև ձեռագրի պատրաստ լինելը մահացել է. «...եւ Մեծպա-  
րոնն՝ եղբայրն Աթապեկին...երես զսուրբ Ճաշոցս Ինտիրճե վանացն, յի-

31 В. Д. Смирнов. *Узл. азт.*, էջ 279:

32 М. Г. Крамаровский. *Узл. азт.*, էջ 149:

33 В. Д. Смирнов. *Узл. азт.*, էջ 283:

34 А. Л. Бертье - Деллагарда, *Узл. азт.*, էջ 21, 104:

չատակ իւր եղբարն...»<sup>35</sup>: Հիշատակարանի հաջորդ մասում Ճաշոցը ստացող հոգևորականները երդվում են թույլ չտալ, որ ձեռագիրը լքի Քրիմական վանքը, իսկ պատերազմի կամ փախուստի դեպքում խոստանում են թաքցնել Կուլյամի Ս. Հովհաննես վանքում և ետ բերել Քրիմական միայն խաղաղության հաստատումից հետո<sup>36</sup>: Ստացվում է, որ Քրիմական Ս. Աստվածածին եկեղեցում պահվող ձեռագիրը ապահով վիճակում լինել չէր կարող՝ Սա պիտի որ պայմանավորված լիներ միայն վանքի տեղադրությամբ: Ուրեմն, այն եղև է բաց տեղանքում, ճանապարհից տեսանելի, մատչելի վայրում և չէր կարող խուսափել հարձակումներից: Նկատենք, որ 1475 թ., այսինքն ձեռագրի ստեղծումից բնդամենը յոթ տարի առաջ թուրք-թաթարական զորքերի միասնական հարձակման ղոհն էին դարձել տասնյակ հարավոր հայեր, հիմնովին ավերվել էին բաղում հայկական բնակավայրեր և հոգևոր կառույցներ<sup>37</sup>: Հավանորեն, Քրիմական հայոց եկեղեցին ևս այս հարձակման հետևանքով տուժել էր, ինչն էլ հենց անհանգստացրել էր Մեծպարոնին, ստիպելով նման երդում պահանջել: Կարևոր է այն, որ Քրիմական վանքն այս առումով համապատասխանում է Աստվածածին Չարխափանի տեղադրությանը, որը ևս գանվելիս է եղել բաց, գյուղամատչելի տեղանքում:

1482 թ. հիշատակարանի կարեորությունը պայմանավորված է նաև նրանով, որ այն հավաստում է Քրիմական վանքի գոյությունը և նույնիսկ գործունեությունը 1475 թ. իրադարձություններից հետո: Եթե վանքը, անցնելով համընդհանուր ավերածության այս ժամանակաշրջանը, շարունակել է գործել, ապա այն մինչև նորագույն ժամանակները գոյատևելու մեծ հնարավորություն է ունեցել:

Հին Ղրիմը պատկերող XVIII դ. վերջին կաղմված ռուսական քարտեզները հստակ տեղեկություններ են պարունակում քաղաքի հյուսիսարևելյան դարպասի մոտ դանվող քրիստոնեական կառույցի վերաբերյալ<sup>38</sup>, որ նույնն է, ինչ որ Մ. Բժշկյանի և Հ. Տեր-Աբրահամյանի հիշատակած հայկական Աստվածածին Չարխափան եկեղեցին: Ժամանակին եկեղեցում պահվել է Ա. Աստվածածին մանկան հետ պատկերող մի սրբանկար, որի ստորին մասում խիստ եղծված, անընթեռնելի արձանագրություն է եղել<sup>39</sup>: XIX դ. կեսերին սրբապատկերն արդեն կիստվեր եկեղեցուց տարել և ամրացրել են քաղաքի ռուսական եկեղեցու պարսպի մուտքի վերնամասում<sup>40</sup>: Վերջինս էլ, ի դեպ, կանգնեցված է եղել ինչ-որ հայկական եկեղե-

35 Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. մաս 9, էջ 33:

36 Նույն տեղում, էջ 33-34:

37 Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. N 7442, թ. 281-282:

38 Այս քարտեզների հիման վրա Մ. Կոմարովսկին կաղմել է քաղաքի ուղ միջնադարյան շրջանի հատակագիծը: Տե՛ս М. Г. К р а м а р о в с к и й. Ելվ. աշխ., էջ 152: Հատակագծի վերատպությունը տե՛ս Տ. Ս ա Ր Գ Ս Յ Ա Ն. Ելվ. աշխ., էջ 113:

39 Г. А й в а з о в с к и й. Истоки христианских древностей в Крыму. — Записки Одесского общества истории и древностей (далее — ЗООИД). Т. I, Одесса, 1844, с. 324; Նույն հոդվածը տե՛ս "Сурб Хач", N1, Симферополь, 1997, с. 39; Г. С п а с с к и й. Старый Крым. — ЗООИД. Т. IV, с. 90.

40 Նույն տեղում:

ցու ավերակների վրա և շուրջն էլ մինչև XIX դ. վերջը հայերեն արձանագրություններով տապանաքարեր են եղել<sup>41</sup>:

XIX դ. վերջին հողակտորը, որի վրա Աստվածածին Չարխափանի ավերակներն են եղել, դնել է Հ. Այվազովսկու քույրը՝ Աննա Այվաղյանը և պատրաստվել վերականգնելու այդ «սուրբ հիշատակը»<sup>42</sup>: XX դ. սկզբին



Եկ. 2

արված մի լուսանկար վկայում է, որ հուշարձանն իրոք վերականգնվել է: Լուսանկարում (նկ.2) պատկերված եկեղեցին արդեն ընդհանուր քիչ բան ունի հայկական ճարտարապետության հետ: Այստեղ դերիշխողը ուսական ոճն է: Փոխվել է նաև վերականգնված եկեղեցու անունը: Լուսանկարում այն հանգես է դալիս որպես Ա. Աննայի մատուռ, անշուշտ, ի պատիվ Աննա Այվաղյանի: Ասկայն այս հանգամանքը որոշիչ դեր չի ունեցել: Մինչև օրս էլ Հին Ղրիմի տարեց բնիկները լուսանկարում պատկերված զմբեթավոր եկեղեցին կոչում են Չարխափանի եկեղեցի և միաձայն ցույց տալիս վայրը, որտեղ այն կանգնած է եղել. քաղաքի ծայրին, գեպի Թեոդոսիա տանող ճանապարհին կից, կամրջի մոտ գտնվող ներկայիս անասնաբուժարանի շենքի մոտ: Միջնադարյան կամուրջը վերակառուցվել է և մինչ օրս էլ դործում է, իսկ եկեղեցին չի պահպանվել: Կարծում ենք, որ վայրի հնագիտական ուսումնասիրությունը հետաքրքրական նյութեր կհայտնաբերի:

1920-ական թվականներին Ս. Աննայի նախկին Աստվածածին Չարխափան եկեղեցին լիկվիդացվում է, իսկ բուն շինությունը տեղական իշխանությունների կողմից 1924 թ. աշնանը դատապարտվում է քանդ-

41 Г. С п а с с к и й. նշվ. աշխ., էջ 90:

42 Հ. Ք. վրդ. Ք ու շ ն Ե Ր Յ ա ն. նշվ. աշխ., էջ 157:



ման<sup>41</sup>: Հուշարձանների պահպանությունը զբաղվող մարմինները մի քանի ծանրակշիռ փաստաթղթեր են կազմում, հավաստում, որ եկեղեցին XIV դ. կառույց է ե ննթակա է պահպանման<sup>42</sup>: Հնարավոր է, որ հուշարձանը ուսումնասիրող հանձնախումբը, որը ես փաստաթղթերից մեկում շեշտում է եկեղեցու XIV դ. կառույց լինելու հանգամանքը, անտեղյակ լինելով դրա XIX դ. վերջում վերականգնված լինելու փաստին: Այդ դեպքում, այս լրջագույն փաստաթղթերում Ս. Աննայի մատուռի թվագրումը XIV դ., կարող է նշանակել միայն այն, որ վերոհիշյալ նորոգությունը մասնակի բնույթ է կրել և XIX դ. վերջին – XX դ. սկզբներին հուշարձանը որպես XIV դ. կառույց հիմնականում կանգուն է եղել: Եկեղեցին հաջողվում է փրկել, սակայն շուտով անտերություն մատնվելով այն սկսում է աստիճանաբար խարխուլվել և Հայրենական պատերազմի նախաշեմին վերջնականապես ավերվում է: Կարծում ենք, որ Քիմճակի Ա. Աստվածածինը ևս XIII դ. վերջի – XIV դ. սկզբի կառույց է եղել: 1305 թ. Ավետիք Խոտաճարակը կանգնեցրել է այս եկեղեցու դմբեթը, ինչը կնշանակի, թե բուն շինությունը պիտի որ կառուցված լինել դրանից ոչ շատ առաջ:

Այսպիսով, ունենք Ս. Աստվածածին անվամբ հայկական դմբեթավոր երկու եկեղեցի: Երկուսն էլ հին Սուրխաթ քաղաքի կազմում, սակայն այդ քաղաքի բնակելի հատվածից հեռու՝ մերձակա դյուղի ծայրամասում: Կարծում ենք, որ եղած փաստերը բավական են այս երկու հուշարձանը նույնացնելու և Քիմճակի հայոց վանքի տեղադրության հարցը լուծված համարելու համար:

Այժմ անդրադառնանք Ավետիք Խոտաճարակին և փորձենք պարզել, թե ուր դնաց նա Քիմճակի վանքը թողնելուց հետո: Նրա Սուրխաթից հեռանալու տարեթվից՝ 1346-ից սկսած ղրիմահայոց ձեռագրերի հիշատակարաններում սկսում է հանգես դալ հայ առաքելական եկեղեցու Ղրիմի աթոռակալ Հովհաննես կրոնավորի կամ Հովհաննես Սեբաստացու անունը<sup>43</sup>: Սեբաստացին այդ պաշտոնում մնաց, հավանորեն, մինչև 1383 թ. և այդ ընթացքում իր հարազատ եղբայրների՝ Ղազար կրոնավորի և վաճառական Հակոբի հետ Ղրիմում կառուցեց մի քանի հողեր շինություններ, այդ թվում և աթոռանիստ Ս. Խաչ վանքի եկեղեցին՝ Սուրբ Նշանը (1358 թ.)<sup>44</sup>: 1346 թ. հիշատակարանում հեղինակը սկզբում խոսում է նույն 1346 թ. Խոտաճարակի և Աբրահամ երեցի «ձեռամբ» Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումն ավարտելու, իսկ այնուհետև Խոտաճարակի հեռանալու մասին: Սյնպիսի տպավորություն է ստեղծվում, թե վիրավորված Խոտաճարակը թողնում է Քիմճակը և տեղափոխվում նորակառույց Ս. Աստվածածին վանք: Ինչպես վկայում են վերը բերված հիշատակարանները, Խոտաճարակը Քիմճակի վանքի առաջնորդն է եղել, ունեցել է աշակերտներ, հետևաբար, չէր կարող իր գլուխն առնել ու դնալ: Հավանաբար, վիրավոր-

43 Центральный государственный архив (далее – ЦГА) Крыма, ф. Р-663, оп. 10, д. 881, лл. 1, 2, 3.

44 Նույն տեղում, թ. 4, 7, 9, 14:

45 ԺԴ գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 348, 349:

46 Տ. Ս ա ր գ ս յ ա ն. Ղրիմի Սուրբ Խաչ վանքը և նրա նորահայտ վիճագրերը. – ՊԲՀ, 1999, N2-3, էջ 311–315:

ված վարդապետը նախաձեռնել է մի նոր վանքի կառուցումը, որը պիտի փոխարիներ Քիմճակի վանքին: Այս մասին է վկայում նորակառույց վանքի անունը՝ Ա. Աստվածածին, այսինքն նույնը, ինչ որ Քիմճակի Հայոց եկեղեցու անունն էր: Հնարավոր է, որ այս վանքի կառուցման մասին է խոսում մի ժամանակ Խոտաճարակին աչակերտած Վարդանը իր վերը բերված 1372 թ. հիշատակարանում. «Յետոյ շինեցաք վանք նոր, զոր Պետրոսի և Խոնայ Ազգի կոչի, յանուն երաշխաւոր սուրբ Աստուածածնին՝ խիստ վայելուչ և սիրուն ամենայն իրաւք»<sup>47</sup>: Վերոհիշյալ Պետրոսը և Խոնայ Ազգին, Հավանաբար, նյութական աջակցութիւն են ցուցաբերել վանքի կառուցմանը, որը կանգնեցվել է անմիջականորեն Ավետիք Խոտաճարակի և Աբրահամ երեցի ձեռքերով:

Քիմճակը թողնելուց հետո Ավետիք վարդապետը երկար չապրեց: Թե երբ նա կնքեց իր մահկանացուն, հայտնի չէ, բայց 1352 թ. մի հիշատակարան վկայում է, որ այդ թվին նա արգեն կենդանի չէր. «Ձստացօղ սորին զՔրիստոսատուր կրանաւորն և զծնօղսն իմ յիշեսջիք ի Քրիստոս, ընդ նմին և զմեծ հեղինակն՝ զհայրն աշխարհի զԱվետիք վարդապետ, զոր խոտաճարակ կոչեն, որ բազում աշխատութեամբ և ճշգրտիվ սնոյց զմեզ մինչ հասոյց յարրունս հասակի... և ինք փոխեցաւ ի ներկայէս յապառնումն. տէր աստուած ողորմեսցի նմա վարձս բարեաց յարքայութեան իւրում և աղօթիւք նորա՝ ամենայն աշխարհի, ամէն»<sup>48</sup>: Հիշատակարանի հեղինակը գրիչ Ստեփանոսն է, որն ընդօրինակել է ձեռագիրը Սուրխաթում՝ «ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սրբոյն Սարգսի զաւրավարի...»<sup>49</sup>: Այս երկու հուշարձաններն էլ գտնվելիս են եզել Աուրխաթի Հայոց թաղի՝ Վերին Հողետների տարածքում<sup>50</sup>:

Սուրխաթի հայ հոգևորականութեան տաճած բացառիկ վերաբերմունքը Խոտաճարակի հանդեպ ևս մեկ վկայութիւն է այն բանի, որ Ավետիք վարդապետը ապրել ու գործել է այս քաղաքի մերձակայքում: Բոլոր հիշատակարաններում էլ «խոտաճարակ» բառը ներկայացված է փոքրատառերով: Հասկանալի է, որ այն հավելյալ անուն է, մականուն, որը ըստ է. Կորխմազյանի, տրվել է Ավետիք վարդապետին նրա անսահմանորեն բարեպաշտ լինելու և բացառապես բուսական մթերքով սնվելու պատճառով<sup>51</sup>: 1417 թ., այսինքն Խոտաճարակի մահվանից մոտ յոթ տասնամյակ հետո, եպիսկոպոս Քրիստոսատուրի գրած հիշատակարանն էլ հայտնում է վայրը, որտեղ թաղված էր վարդապետը՝ Քիմճակի վանք<sup>52</sup>: Այսպիսով, Քիմճակը գարձել էր Ավետիք Խոտաճարակի վերջին հանգրվանը: Եպիսկոպոս Քրիստոսատուրը մեծագույն պատկառանքով է նկարագրում իր ձեռագրի ստեղծման վայրը. «Ընդ հովանեաւ հռչակաւոր երկնահանգէտ և սուրբ ուխտիս, որ կոչի Քիմճակի վանք, յանուն կենսակիր մօրն լուսոյ սուրբ Աստուածածնին, և առ հանգստարան երջանիկ և սուրբ հօրն մերոյ

47 Ժ. Դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 503:

48 Նույն տեղում, էջ 399:

49 Նույն տեղում:

50 Տ. Ս ա Ր գ ս յ ա ն. Միջնադարյան Սուրխաթի հայերը և նրանց հավատատեղիները, էջ 111:

51 Յ. Կ օ Ր Խ մ ա Յ ի ն. նշվ. աշխ., էջ 9:

52 Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. մաս Ա, էջ 207:

խաչաչարչար խոտաճարակ մեծ ճղնաւորին Քրիստոսի և արիղերալոյս Ավետիք վարդապետին, յոյժ վայելուչ զուարթատեսիլ և տրամահալած լեռնային և դաշտային ծովահայեաց»<sup>53</sup>:

Փորձենք պարզել, թե ուր գնաց Ավետիք վարդապետը, այլ խոսքով, թե որտեղ էր դառնում Ս. Օդսենտի վանքի մերձակայքում 1346 թ. կառուցված Ս. Աստվածածնի վանքը: XIV–XV դդ. շրիմահայոց ձեռագրերը Ս. Օդսենտի անունով հոդեոր այլ կենտրոնների կողքին հիշատակում են նաև «սուրբ ուխտ Աւքսենդիոսի»<sup>54</sup>: Ամենայն հավանականութամբ, հենց այս ուխտի մոտ է Ավետիք խոտաճարտկը կանգնեցրել Ս. Աստվածածնի վանքը: Ելնելով Քրիստոսատուրի «տրամահալած լեռնային և դաշտային ծովահայեաց» արտահայտությունից, պետք է ենթադրել, որ և՛ թե Քիմճակի վանքը Սուրխաթում էր, այսինքն լեռնային դոտում, ուրևմն նորակառույց Ս. Աստվածածնի, ինչպես նաև Ս. Օդսենտի վանքերը պիտի լինեին ծովափնյա գոտում: Այս առումով սխալ կլինեին ենթադրել, թե «ծովահայեաց» վանքի տակ գրիչ Քրիստոսատուրը ի նկատի է ունեցել Կաֆայի Ս. Երրորդություն եկեղեցին, որը, վաստորեն, կառուցվել է խոտաճարակի նախաձեռնությամբ, քանի որ այս եկեղեցին հիշատակող XIV դ. գրավոր վկայություններից ոչ մեկը, բացառությամբ, իհարկե, հոգվածի ամենակցում բերվածի, խոտաճարակի վերաբերյալ բառ անդամ չեն պարունակում<sup>55</sup>: Պարզ է, որ Ս. Երրորդության եկեղեցու կառուցումն ավարտելուց հետո, վարդապետը նրա հետ այլևս առնչություն չի ունեցել: Դրա փոխարեն կարելի է դիտարկել ծովափնյա դոտում, Կոկտեբելի (ներկայումս՝ Պլաներսկոյե) մերձակայքում, Կարադաղի փեշերին դառնվող ավերված հայկական վանքի դոտության հնարավորություն<sup>56</sup>, որը, համաձայն շինարարական արձանագրության, կառուցվել է ոմն Ավետիք վարդապետի կողմից. «Ձառաջին շինող տճրիս աւետիք վրդե պրաքաքն յիշ ի քս»<sup>56</sup>: Արանից ներքև մեկ այլ արձանագրություն է եղել. «Ձվերջ նորդղ տճրս Ստեփան վրդպտս: Ձինտիր արէդէս պր. ընտրկին զպարուլուքէն վստրք յիշ ի քս: Թվ պժ 1401»<sup>57</sup>: Տաճարի 1401 թ. նորոգված լինելու հանդամանքը թույլ է տալիս ենթադրել, որ այն առնվազն XIV դ. առաջին կեսի կառույց է: Կողմնակիորեն այս թվագրումը հաստատում է նաև Յու. Թամանյանը՝ նմանեցնելով հուշարձանից մնացած զարդաքեկորները Ղրիմի XIV դ. մյուս հայկական հուշարձանների զարդամոտիվներին<sup>58</sup>: Մ. Բժշկյանը գրում է, թե իր օրերում կանդուն են եղել եկեղեցու պատերը և «խորանն յանուն սրբ Ատեփաննոսի»<sup>59</sup>: Գ. Այվազովսկին իր վաղ շրջանի աշխատություններից մեկում եկեղեցին անվանում է Ս. Գևորգ և, չնայած վրայի հայատառ արձանագրությանը, այն ներկայաց-

53 Նույն տեղում:

54 Ժ Դ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 401, 418: Ժ Դ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Ա, էջ 19:

55 Տես Ժ Դ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 401, 447, 452:

56 Մ. Բ Ժ Կ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 320:

57 Նույն տեղում:

58 Ա. Ա. Я к о б с о н, Ю. А. Т а м а н я н. Армянская архитектура в Крыму. Ереван, 1992, с. 51.

59 Մ. Բ Ժ Կ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 320:

նում որպես հունական<sup>60</sup>: Իր հաջորդ աշխատություններից մեկում նա կրկնում է Մ. Բժշկյանի ասարբերակը, եկեղեցին անվանելով Ս. Ստեփանոս<sup>61</sup>: Կարծում ենք, որ տվյալ դեպքում գործ ունենք ոչ թե Ս. Ստեփանոսի, այլ 1346 թ. կառուցված Ս. Աստվածածին եկեղեցու հետ ե ահա թե ինչու:

Նախ և առաջ, ինչպես արդեն ասվեց, եկեղեցին առնվազն XIV դ. առաջին կեսի կառույց է, մինչդեռ այդ շրջանի ղրիմահայ գրավոր աղբյուրների բավականին հարուստ հավաքածուն Ավետիք Խոտաճարակից բացի որևէ այլ Ավետիք վարդապետի մասին չի հաղորդում: Երկրորդ, ոչ հիմնադրման ե ոչ էլ նորոգության արձանագրություններում եկեղեցու անունը հիշատակված չէ, հետևաբար Բժշկյանը իր տվյալները վերցրել է տեղաբնակների զրույցներից, որոնց ձևավորման գործում, հավանորեն, իր ազդեցությունն է ունեցել երկրորդ արձանագրության մեջ հիշատակվող Ստեփանոս վարդապետի անունը: Մ. Բժշկյանը իր աշխատությունը պարաստել է XIX դ. 20-ականներին, այսինքն Ղրիմի քրիստոնյաների 1778 թ. բռնագաղթից մի քանի տասնամյակ հետո, երբ բուն հայերը թերակղզում շատ փոքր թիվ էին կազմում, իսկ բնակավայրերից հեռու դտնվող վանքերը վաղուց անտերություն էին մատնված: XVIII դ., ինչպես նաև XIX դ. սկզբներին այս վանքերի մի մասում հաստատվել էին հույներ<sup>62</sup>:

Մեզ հետաքրքրում է առաջին արձանագրության հետևյալ մասը. «...աւետիք վրդե պրսքաքն...»: Պարզ է, որ վերջին բառի առաջին տառը «պ»-ն վերաբերում է նախորդ բառին, որը պետք է վերծանել «վարդապետ»: Բժշկյանը այն կցել է հաջորդին, հավանաբար, չսլատկերացնելով, թե ինչ բառ կարող էր լինել «ր»-ով սկսվողը: Նույն արձանագրության անդրադարձել է Գ. Այվազովսկին: Նրա մոտ արձանագրության առաջին մասը ունի հետևյալ տեսքը.

«ՋԱՌԱՋԻՆ ԾԻՆՈՂ ՏՃՐԻՍ Ա  
ԻԵՏԻՔ ՎՐԴՊՏԱ...ՅԻՇ Ի ՔԱ»<sup>63</sup>

Ինչպես տեսնում ենք, Այվազովսկին ոչ միայն «Պ» տառն է կցել «վարդապետ» բառին, այլև տեսել և միացրել է «Տ» և «Ա» տառերը: Այսինքն, այնտեղ, որտեղ Բժշկյանը տեսել է «րս» տառակապակցությունը, Այվազովսկին տեսել է «ՏԱ»: Հաջորդ բառն ընթերցել նրան չի հաջողվել: Ելնելով այս երկու հեղինակների հրատարակումներից, կարելի է ասել, որ արձանագրությունն ընդհանուր առմամբ լավ է պահպանված եղել, բայց «վարդապետ»-ին հաջորդող, մեզ հետաքրքրող միևնույն բառը երկուսին էլ չի հաջողվել վերծանել: Մ. Բժշկյանի մոտ բերված տարբերակը 1996 թ. վերահրատարակել է Գր. Գրիգորյանը, «պրսքաքն» հատվածը վերծանելով

60 Տե՛ս ՅՕՕԻԴ, տ. I, ս. 328; "Сурб Хач", N1, 1997, с. 39.

61 Армянские надписи, находящиеся на юге России. Перевод Г. Айвазовского. — ՅՕՕԻԴ, տ. VI, 1867, с. 330.

62 Տե՛ս ՅՕՕԻԴ, տ. I, ս. 320–328; "Сурб Хач", N1, 1997, с. 34–39; В. Х. К о н д а р я н. Универсальное описание Крыма. Ч. 1, Николаев, 1873, с. 250–252.

63 ՅՕՕԻԴ, տ. VI, с. 330.

որպես «սլարսկահայ»<sup>64</sup>: Նման վերծանությունը հավանական չի թվում, քանի որ սլարսկահայերը որպես այգոլիսիք Ղրիմում հայտնվեցին միայն XIX դ. սկզբներին և բնակություն հաստատեցին Կարասուերագարում (ներկայումս՝ Բելոգորսկ) և զրա մերձակայքում<sup>65</sup>, այսինքն արևելյան ծովափնյա շրջանից զգալիորեն հեռու: Կարծում ենք, որ արձանագրության մեջ խոսքը գնում է եկեղեցու հիմնադիր Ավետիք վարդապետ Խոտաճարակի մասին, բայց ո՛չ Մ. Բժշկյանը ե ո՛չ էլ Գ. Այվազովսկին նրա մականունը վերծանել չեն կարողացել, քանի որ զրան ծանոթ չեն եղել: Բժշկյանը իր զրքում բերված բոլոր արձանագրությունները ներկայացնում է փոքրատառերով, բայց ակնհայտ է, որ այս արձանագրության ավանդույթների համաձայն, արված է եղել մեծատառերով: Հաստատասպես կարելի է ասել, որ Գ. Այվազովսկու թարգմանությանը հրատարակված, վերը բերված աարբերակը իր ձևով ե կառուցվածքով ավելի մոտ է բնօրինակին, որի ճակատագիրը մեղ անհայտ է: Հնարավոր է, որ այն կորսվել է անվերադարձ, հնարավոր է նաև, որ դեռ պահվում է հուշարձանի փլատակների տակ: Ինչևէ, կարծում ենք, որ արձանագրության մեղ հետաքրքրող հատվածը ունեցել է հետևյալ տեսքը.

ՋԱՌԱՋԻՆՇԻՆՈՂՏՃՐԻՍԱ

ԻԵՏԻՔՎՐԴՊՈՃԱՔՆՅԻՇԻՔՍ

Վերծանությունը հետևյալն է. «ՋԱՌԱՋԻՆ ՇԻՆՈՂ Տ [Ա] Ճ ՐԻՍ ԱԻԵՏԻՔ Վ[Ա] ՐԴ [Ա] Պ [ԵՏ] Խ [Ո] Տ [Ա] Ճ [Ա] ՐԱՔՆ ՅԻՇ [ԵՑԵՔ]Ի Ք [ՐԻՍՏՈ] Ս»:

Այն, որ Բժշկյանի մոտ բերված «ր» և «ս» տառերը կցագրված են եղել, հաստատում են Այվազովսկու վերծանության նույն տեղում գրված «Տ» և «Ս» տառերը: Այսպիսով, «ՐՍ»-ն, որ կարող էր ընթերցվել նաև «ՏՍ» պիտի ունենար հետևյալ ձևը՝ «ՐՍ»: Կցագրություն, որը այս դեպքում պետք էր ընթերցել «ԽՏ»: Կցագրված են եղել նաև «Ճ» և «Ր» տառերը և Բժշկյանի կողմից ընթերցվել որպես «Ք»:

Այսպիսով, լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ 1346 թ. Ավետիք Խոտաճարակի կողմից կառուցված Ս. Աստվածածնի վանքը հենց Կարադաղի փեշերին գտնվող, այսօր ավերակ դարձած հուշարձանն է: Այս հանդամանքը թույլ է տալիս հայոց Ս. Օգոսենտի վանքը փնտրել Կարադաղի մերձակայքում:

64 Դիվան հայ վիմագրության. պրակ 7, կազմեց Գր. Գրիգորյան. Երևան, 1996, էջ 146:

65 Մ. Բ ժ շ կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 244:

ОБ АВЕТИКЕ ХОТАЧАРАКЕ И МОНАСТЫРЕ  
КИМЧАК СВ. БОГОРОДИЦЫ

TATEVIK SARGSYAN

## Р е з ю м е

Архимандрит Аветик Хотачарак был одним из выдающихся армянских деятелей Крыма первой половины XIV в. По его инициативе создавались рукописные книги и воздвигались церкви. В течение долгих лет архимандрит был настоятелем монастыря св. Богородицы, расположенного на окраине селения Кимчак, и возглавлял действующую там духовную школу. В статье, основываясь на сведениях средневековых источников, автор локализует селение Кимчак (Гамчак, Кемчак) близ города Сурхат (Солхат, Крым, Эски Крым, ныне Старый Крым), в котором в средние века проживало много армян. Позднее селение Кимчак получило название "Текэ", несомненно, из-за существовавшего там в то время дервишского монастыря — текие. Близ Старого Крыма до сих пор еще сохранились развалины памятника Кемаль Ата, представляющие собой остатки обители последователей мистического суфизма. Недалеко от Кемаль Ата, на самой окраине Старого Крыма до начала Великой Отечественной войны стояла полуразрушенная армянская церковь XIV в., значащаяся в описаниях XIX в. как церковь Заступницы Богородицы (Чархапан Аствацацин, с конца XIX в. — часовня св. Анны). Это обстоятельство дает реальное основание для идентификации церквей св. Богородицы Кимчака и Заступницы Богородицы. По неизвестным нам причинам, в 1346 г. "оскорбленный Аветик Хотачарак" покинул свою обитель и обосновался в новопостроенном монастыре св. Богородицы "близ монастыря св. Оксента", а вскоре (между 1346 и 1352 гг.) скончался и был похоронен в монастыре Кимчак. Памятные записи армянских рукописей Крыма, а также сравнительный анализ опубликованных М. Бжшкяном и Г. Айвазовским вариантов строительной надписи церкви св. Стефана, расположенной на склонах горы Карадаг (близ Коктебеля, ныне Планерское), дают возможность для отождествления этой церкви с той, куда переехал Хотачарак в 1346 г.

ABOUT AVETIK KHOTACHARAK AND THE KIMCHAK MONASTERY OF ST.  
VIRGIN

TATEVIK SARGSYAN

## S u m m a r y

Archimandrite Avetik Khotacharak was one of the significant Armenian individuals of the Crimea of the 14th century. He was the initiator of the creation of several manuscripts as well as of the construction and reconstruction of a number of churches. In the course of the years the archimandrite was the superior of St. Virgin Monastery, disposed on the border of the village Kimchak, and headed the seminary functioning there. Basing, on the medieval period information, the author locates the village Kimchak (Gamchak, Kemchak) close to the ancient

merchant town Surkhat, where in the Middle ages lived many Armenian settlers. Later the village was renamed as "Teke", undoubtedly, because of the dervish monastery *tekie*, existing there. Near the Old Crimea the ruins of a monument named Kemal Ata have preserved till now, representing the remains of a cloister belonging to the followers of the mystic sufizm in the past. Till the beginning of World War II not far from Kemal Ata an Armenian church of the 14th century was standing, in the town descriptions of the 19th century mentioned as the Church of the Intercessor (Charkhapan). St. Virgin (since the end of the XIX century – Chapel of St. Ann). This fact makes a real proof for the identification of this church with that of Kimchak. In 1346, under the unknown for us circumstances, "the offended Avetic Khotacharak" left Kimchak and settled in the Church of St. Virgin built by himself in the same year, and situated "near the St. Oksent Monastery". Soon (between 1346 and 1352) he died and was buried in the Kimchak Monastery, which didn't stop functioning after the archimandrite's going away. The notes made in the medieval Armenian manuscripts of the Crimea, and comparative analysis of the variants of building inscription of the Armenian church of St. Stepanos disposed on the mountain Karadag, published by M. Bejeshkyan and G. Aivazovsky, come to approve the identity of this church with that where in 1346 Khotacharak moved.